«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Կոստիկյան

Ուսումնական հաստատություն՝ Արտաշատ հ. 4 հիմնական դպրոց

Երևան 2022

Թեմա՝ Խոսքային հաղորդակցում

Հարց՝ Արդյո՞ք ուսուցիչը կարող է ազդել երեխայի գրագետ խոսքի վրա

Կատարող՝ Անահիտ Կոստիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....էջ 3

Գլուխ 1.Խոսքային հաղորդակցում.....էջ 6

Գլուխ 2. Մանկավարժական հաղորդակցում կազմակերպելու ուսուցչի հոգեբանամանկավարժական հմտությունները.....էջ7

Գլուխ 3. Հարցաթերթ..... 12

Եզրակացություն .....էջ 19

Գրականության ցանկ.....էջ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ով կարողանում է հաղորդակցվել մարդկանց հետ,
նա լավ է վարում և մասնավոր և ընդհանուր գործերը, իսկ ով չի կարողանում՝ նա և
այնտեղ և այստեղ սխալներ է թույլ տալիս:

Սոկրատես

Թեմայի արդիականությունը: Տեղեկատվական հասարակության և նորագույն տեխնոլոգիաների ներդրման շրջանում առավել քան կարևորվում է մանկավարժական խոսքային հաղորդակցման դերը ուսուցման գործընթացի կազմակերպման, սովորողների անհատական զարգացման գործում: Ուստի անհրաժեշտ է հետազոտությունների միջոցով պարզել մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները ուսուցիչ-աշակերտ , աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում, դիտարկել հաղորդակցման իրականացման ժամանակակից միջոցներն ու պայմանները հանրակրթական գործունեության մեջ:

Այսօր հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անձից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները հաղորդակցվելու միջոցով լուծելու հմտություններ: Ուստի կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական, խոսք և հաղորդակցում վարելու կարողության ձևավորումը: Այս է պատճառը, որ ներկայումս բավականին արդիական է կրտսեր դպրոցականների խոսքի և հաղորդակցման գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է ծավալվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբի համագործակցությամբ: Տարրական դպրոցում են ձևավորվում երեխայի անձի բազմաթիվ որակները, այդ թվում՝ նրա հաղորդակցումը: Այս կարողության ձևավորման միջոցներից են խոսքը և հաղորդակցումը:

Արդի ուսուցման հիմնական նպատակն է՝ ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և այն կիրառելու կարողություններ: Խոսքի և հաղորդակցման կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում երեխայի հաղորդակցական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ խոսքի և հաղորդակցման գործունեության մեջ: Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորումն ու զարգացումը հատկապես

կարևոր արդիական է կրտսեր դպրոցական տարիքի համար, քանի որ այդ տարիքը համարվում է անձի մտավոր ուժերի բուռն զարգացման, վարքի արժեքային կողմնորոշումների ձևավորման շրջան:

Մանկավարժական հաղորդակցությունն ունի որոշակի կառուցվածք, առանձնահատկություն և իրականացման տեխնոլոգիա, որին ուսուցիչները երբեմն ինքնաբերաբար տիրապետում են: Բայց վստահաբար կարելի է ասել՝ մանկավարժական հաղորդակցությունը սովորելն անհրաժեշտ է և անհրաժեշտ: Հենց երեխաների հետ շփվելու, մանկավարժական հաղորդակցության հիմքերը յուրացնելու աննկատ ու տքնաջան աշխատանքի մեջ է ձևավորվում ուսուցչի ստեղծագործական անհատականությունը:

Սույն աշխատությունում ներկայացված է, թե ինչ է իրենից ներկայացնում մանկավարժական հաղորդակցումը, անդրադառնում է մանկավարժական մտքերին, հաղորդակցման գործառույթներին, ոճերին, ուսուցչի դիրքին և դերին:
Հետազոտական աշխատանքի ժամանակ կիրառվել են հետևյալ հիմնական մեթոդները՝ դիտում, հետազոտում, տվյալների հավաքագրում,սոցոլոգիական հարցում:

Հետազոտության նպատակն է.

1.Իրականացնել հիմնահարցի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
2. Պարզել,թե ի՞նչ է հաղորդակցումը և խոսքային հաղորդակցումը:
3.Կարողանալ գտնել այնպիսի մեթոդական համակարգ, որը կնպաստի դպրոցականների խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացմանը:
4.Հետազոտության միջոցով գտնել կրթության ոլորտում մանկավարժական հաղորդակցման իրականացման ժամանակակից այնպիսի միջոցներ և պայմաններ,որով կարելի է տալ խնդիրների բացահայտումը և դրանց լուծման հնարավորությունները:

- Կարևոր է հետազոտության միջոցով պարզել մանկավարժական խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները ուսուցիչ - աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում:
- Հետազոտական աշխատանքի անցկացման միջոցով բացահայտել խոսքի և հաղորդակցության դերը կրտսեր դպրոցականների հաղորդակցման կարողության ձևավորման գործում:
- Մշակել և փորձարկել խոսքի և հաղորդակցման կիրառման համար անհրաժեշտ միջոցներ ու հնարներ:
- Կատարել մանկավարժական հաղորդակցության խնդրի, դրա կառուցվածքի, գործառույթների, նպատակների, բովանդակության և միջոցների տեսական վերլուծություն:

Գլուխ 1

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ,ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Խոսքը լեզվի իրական վիճակն է, իսկական գոյը:
Ղ. Աղայան

Ի՞նչ է հաղորդակցումը: Այն տեղեկատվության փոխանցումն է մարդուց մարդ. բազմաշերտ գործընթաց, որը ենթադրում է և անձերի,և մարդկային խմբերի միջև շփման զարգացում: Հաղորդակցման խնդիրներին առնչվում են մարդկային գործունեության տարբեր բնագավառների մասնագետներ, դրանով իսկ պայմանավորված հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու կենսական խնդիրների թվին :

Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ հույզեր և այլն:

Իսկ ի՞նչ է նշակում կարողանալ հաղորդակցվել .

Այն նշանակում է ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները՝ նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել:

Տեղեկություն հաղորդողն ընտրում է փոխանցվելիք միտքը, գաղափարը, ձևակերպելով ծածկագրելով խոսքային հաղորդկցման միջոցների օգնությամբ և հաղորդում պատասխանը:

Ընդունված է համարել, որ հաղորդակցման ընթացքում տեղեկության 35տոկոսը փոխանցվում է խոսքային, իսկ 65 տոկոսը՝ ոչ խոսքային ճանապարհով: Խոսքային ուղիով փոխանցվում է «մաքուր» տեղեկատվություն, իսկ ոչ խոսքայինով՝ վերաբերմունք: Մարդու ոչ խոսակցական վարքն անքակտելիորեն կապված է նրա հոգեկան վիճակի հետ և դրանով իսկ կարող է բացահայտել անհատի ներաշխարհը:

Հոգեբաններ Լ. Ս. Վիոտսկին, Ա. Լ.Լեոնտևը և ուրիշներ ապացուցել են, որ երեխայի հոգեկան բոլոր գործընթացները (հիշողություն, ուշադրություն, մտածողություն, ըմբռնում) ձևավորվում են խոսքի միջոցով [1]: Խոսքը հոգեկան բարդ գործընթաց է, որի զարգացումը կախված է մի շարք պայմաններից: Կարևորվում է շրջապատի միջավայրի ներգործությունը. երեխան սովորում է խոսել, ընդօրինակել մեծահասակներին, որոք պետք է նպաստեն երեխայի ճիշտ, հստակ խոսքի ձևավորմանը: Բանն այն է, որ երեխան վաղ տարիքից լսելով մաքուր, գեղեցիկ, ճիշտ խոսք՝ արդյունքում ձևավորում է սեփական խոսքը:

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ.Ս.Վիգոտսկի)[13]:

Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար մարդը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Երեխան նախ շփվում է ծնողների հետ, այնուհետև նաև այլ մարդկանց, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեության նորմերն ու կանոնները, այսինքն՝ հասկանում է, թե ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Իր շրջապատի սոցիալական նորմերի յուրացման այս գործընթացն էլ հենց **սոցիալականացումն է:**

Երեխայի վաղ սոցիալականացման ամենակարևոր կողմերից մեկը նրա հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է:
Հենվելով մի շարք հոգեբանամանկավարժական հետազոտությունների և իմ ուսում նասիրությունների վրա՝ կարող եմ նշել, որ խոսքային հաղորդակցման լիարժեք ու ղղորդումը նպաստում է երեխաների և միջավայրի փոխհարաբերությունների ձևավորմանը, նրանց անձնային տարբեր որակների զարգացմանը:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա՝ հայերենով հաղոդակցվել մե ծահասակների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը
և արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստե ր, գրավոր շարադրել պարզ տեքստեր, կարողանալ աշխատել
համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախաձեռնող: Պետք է կարողանա գ իտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը, հարգել և ընդունել ընտանեկան ու հասարակական,կյանքի արժեքները, իմանա իր իրավունքներն ու պարտականությո ւնները, պատասխանատու լինի իր արարքների համար,
ցուցաբերի հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ,
հանդուրժողականություն և զուսպ
վարք ունենա: Այս բոլորի համար ուսուցիչը պետք է իրականացնի տարրական դպրոցի կարևորագույն խնդիրը՝ սովորել սովորեցնել:

Գլուխ 2

Մանկավարժական հաղորդակցում կազմակերպելու ուսուցչի հոգեբանամանկավարժական հմտությունները

Ուսուցչի մասնագիտությունը պատկանում է <<մարդ-մարդ>> մասնագիտությունների թվին, իսկ վերջիններիս հիմքում ընկած է մարդկային հաղորդակցումը: Ուսուցիչ –դաստիարակի գործունեությունը հաղորդակցման գործունեություն է: Ուստի մանկավարժական գործունեության մասնագիտացման կարևոր կառուցվածքային բաղադրիչն է հաղորդակցման մասնագիտացումը՝ որպես պրակտիկայում իր մասնագիտական գիտելիքների օգտագործման ուսուցչի պատրաստվածության և կարողության դրսևորում. կողմնորոշում դեպի ապագա մանկավարժական գործունեությունը. իբրև սեփական ուժերի փորձարկման դաշտ: Մանկավարժի մասնագիտության մի կարևոր առանձնահատկությունը, որն ըդգծել են մանկավարժության գրեթե բոլոր դասականները. այն է ,որ ուսուցիչ – դաստիարակը պարտավոր է մշտապես սովորել, ինքնակատարելագործվել,այլապես նա կդադարի լիարժեք ուսուցիչ լինելուց: Այժմեական հնչողություն ունի ականավոր մանկավարժ Ա.Դիստերվեգի հետևյալ միտքը. <<Այն ուսուցիչը, որը դադարում է սովորել, դադարում է ուսուցիչ լինել>>[3] :

Ուսուցիչն իրականացնում է բազմաթիվ մասնագիտական գործառույթներ, սակայն դրանցից կարևորագույններից է մանկավարժական հաղորդակցումը: Մասնագիտական հաղորդակցման դերը մեծ է, քանի որ աշակերտի անձի զարգացման նկատմամբ ներգործության ուղղվածության մթնոլորտը ստեղծում է հենց ուսուցիչը [1, էջ 52]:

Մանկավարժական հաղորդակցում կազմակերպելու համար անհրաժեշտ է ուսուցչի մանկավարժական պրոֆեսիոնալիզմը,անմիջականությունը, ուսուցչի զարգացվածության մակարդակը, վստահությունն ու հավատը աշակերտների նկատմամբ: Ուսուցչի խոսքը ոչ միայն հաղորդակցվելու միջոց է,այլև հմտություն, արվեստ, որոնց լիովին կարող է տիրապետել ամեն ոք, ով գիտակցում է խոսքի դերը և ցանկանում այն գործադրել աշխատանքի արդյունավետ ու ներդաշնակ կազմակերպման համար: Որքան հակիրճ, հստակ,բովանդակալից և անկեղծ է խոսքը,այնքան ավելի ներգործուն և ազդեցիկ է այն հնչում:Հաջող

հաղորդակցությունը կախված է նրանից թե որքան հստակ ենք արտահայտում մեր մտքերը:

Մանկավարժական հաղորդակցումը ուսուցման պրոցեսում դրոցականների հետ ուսուցչի այնպիսի հաղորդացումն է,որը լավագույն պայմաններ է ստեղծում սովորողների մոտիվացիայի և ուսումնական գործունեության ստեղծագործական բնույթի զարգացման, դպրոցականի անձի ճիշտ ձևավորման համար ապահովում է ուսուցման բարենպաստ հուզական կլիման /մասնավորապես,արգելվում է <<հոգեբանական պատնեշի>> առաջացումը/:

Մանկական կոլեկտիվում սոցիալ-հոգեբանական պրոցեսների կառավարումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսում առավելագույն չափով գործադրել ուսուցչի անհատական առանձնահատկությունները [2, էջ 12]

Ըստ Մ.Ի.Կալինինի <<Աշակերտների դաստիարակությունը ամենից առաջ ուսուցչի վարքագիծն է դասարանում, վերաբերմունքը աշակերտների նկատմամբ [5, էջ 71]:

Երեխաների վրա ներգործելու ուսուցչի կարողության հարցին հատկապես մեծ ուշադրություն է դարձրել Ա.Ա.Մակարենկոն:Նա ընդգծել է, որ մանկավարժական վարպետությունը նաև դաստիարակի ձայնի ելևէջի մեջ է: <<Ձայնի ելևէջը, միմիկան, նստելու,վեր կենալու կարողությունը շատ կարևոր են մանկավարժի համար: Ամեն մի չնչին բան մեծ նշանակություն ունի և այդ չնչին թվացող բանը մեծ նստվածք կարող է թողնել երեխայի զարգացման վրա [6, էջ 506]:

Սովետական ականավոր մանկավարժ Ս.Տ.Ծայկինին է պատկանում այն միտքը,որ ուսուցիչը պետք է հոգա ոչ միայն իր պահանջների բովանդակության, այլև դրանք ներկայացնելու ձևի ու տոնի մասին [2, էջ 14]:

Ըստ Վ.Տ.Սուխոմլինսկու ուսուցչի խոսքը ամենից առաջ մարդկայնության, զգայունության, համբերության զենք է. <<Եղեք շրջահայաց, որպեսզի խոսքը մտրակ չդառնա, որ դիպչելով նուրբ մարմնին այրում է, կոշտ սպիներ թողնելով ողջ կյանքում:Բառը դեռահասի հոգին խնայում ու պահպանում է միայն այն ժամանակ, երբ նրանում չկա կեղծիք, <<պախարակելու>> ցանկություն:Մանկավարժի խոսքը պետք է ամենից առաջ երեխաներին հանգստություն պատճառի, հանգստացնի /[9, էջ 102-103]:

Ուսուցիչը պետք է հաղորդակցումն այնպես կազմակերպի ասես այն պարզ բնական , դասին ինքնիրեն ենթարկվող երևույթ է: Նա մշտապես պետք է շատ նրբանկատ լինի երեխաների <<զգացմունքային լիցքերին>> զգա միանգամից ողջ լսարանը և առանձին-առանձին յուրաքանչյուր սովորողին:

Միաժամանակ պետք է լինի և հետաքրքիր զրուցակից և բարի ընկեր՝ շահագրգիռ այն երեխաների աշխատանքով ու կյանքով, որոնց հետ հաղորդակցվում է [11, էջ 8]:

Յուրաքանչյուր մանկավարժ պետք է սիրով և հոգատարությամբ վերաբերվի իր աշխատանքին, որպեսզի սովորողի համար յուրաքանչյուր պարապմունք անցնի յուրահատուկ հետաքրքրությամբ: Լավ մանկավարժ կարող է համարվել այն մանկավարժը, ով մեծ ուրախությամբ և պատասխանատվության զգացումով է կատարում իր առջև դրված աշխատանքը և միայն այս դեպքում մանկավարժը կհասնի գերազանց արդյունքների և կդաստիարակի հիանալի սերունդներ:

Ուսումնասիրելով տարբեր ականավորների մտքերը,ունենալով բավականին երկար փորձ աշակերտների հետ աշխատելու,նաև լսելով դպրոցում աշխատող այլ ուսուցիչների բանավոր խոսքը,կազմեցի հարցաթերթիկ աշակերտների համար,պարզելու համար,թե երեխաներն ավելի շատ ուսուցչի խոսքի ինչն են կարևորում :

Հարցաթերթ

Հարգելի աշակերտ հետազոտական աշխատանքի շրջանակներում անցկացվում է հարցում, որի նպատակն է ուսումնասիրել ուսուցչի բանավոր խոսքը աշակերտի դաստիարակության և զարգացման գործընթացում:

Հետազոտությունն անանուն է. տվյալները հրապարակվելու են միայն ընդհանրացված և վերլուծված տարբերակով:

1.Ուսուցչի խոսքի մեջ ի՞նչն եք կարևորում

ա. գրագետ խոսքը

բ.առոգանությունը

գ. մատչելի խոսքը

2. Ինձ համար կարևոր է այն ուսուցչի խոսքը,ով...

ա. ունի գրագետ խոսք

բ. գեղեցիկ է

գ.վախ է ներշնչում

3. Ես ամբողջությամբ գոհ եմ այն ուսուցչից,ով ...

ա.խիստ է ,բայց ոչ դաժան

բ.ունի գրագետ և բանավոր, և գրավոր խոսք

գ.վստահելի է,առանց վարքագծի նորմերի չարաշահման

4.Իմ կարծիքով ուսուցիչը պետք է ունենա

ա.բարի կամեցողություն առանց փաղաքշանքի

բ.տոնի լրջություն առանց լարվածության

գ.գրագետ խոսք առանց ցուցամոլության

5.Ո՞ր ուսուցիչը քեզ համար գրավիչ չէ

ա. ով գրագետ խոսք չունի

բ.ով գեղեցիկ չի հագնվում

գ.ով առարկային լավ չգիտի



Այսպիսով, ամփոփելով սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը, պարզ է դառնում,որ երեխաների համար չափազանց կարևոր է մանկավարժի հետ հազորդակցմումը ,իսկ հարղորդակցման ընթացքում ուսուցչի գրագետ խոսքը և վարքագիծը: Զրույցի ընթացքում պարզ դարձավ,որ երեխաները ավելի նախընտրում են մանկավարժի հետ չափի մեջ ընկերական հարաբերությունները,որի արդյունքում իրենց մոտ ձևավորվում է հարգանք դեպի ուսուցիչը: Մանկավարժական հաղորդակցումն ուսուցչի համար հիմնական մասնագիտական կոմպետենտություններից մեկն է , քանի որ ուսուցչի համար կարևորը պետք է լինի ոչ միայն գիտելիքների հաղորդումը այլ նաև երեխաների անձի զարգացումը: Ուսուցիչը պետք է հաճույք ստանա աշակերտների հետ հաղորդակցման և շփման գործընթացից: Հաղորդակցումը ճիշտ իրականացնելու համար շատ կարևոր է նաև ուսուցչի դերն ու դիրքը:

. Ուսուցչի <<փակ>> ծածկված դիրքը, որի համար բնորոշ են արտահայտման անդեմ ձևը, իրագործված օբյեկտիվ ոճը, սեփական բանակցությունների և կասկածների, անհանգստությունների, դասավանդման էմոցիոնալ արժեքավոր ենթատեքստի կորուստն, ինչը երեխաների մոտ չի առաջացնում պատասխան ցանկություն բացվելու և արտահայտվելու:

. Ուսուցչի բաց դիրքը, որի դեպքում ուսուցիչը հրաժարվում է սեփական մանկավարժական ամենագիտությունից և անթերիությունից, բացակայում է իր սեփական փորձը սովորողների և համադրում է իր անհանգստությունները նրանց

անհանգստությունների հետ, շարադրում է ուսումնական նյութը իր ընկալման պրիզմայի միջով: Այս ընթացքում կատարվում է ուսուցչի և սովորողների միջև երկխոսություն, որի համար բնորոշ է հարգալից վերաբերմունք զրուցակցի կարծիքի նկատմամբ, կարողանալ անցնել զրուցակցի տեսակետի կողմը, քննադատորեն գիտակցել սեփական դիրքորոշումը, մանկավարժական լավատեսությունն ու վստահությունը , <<շարժվել ընդառաջ>> դեպի աշակերտը: Ընդունվում է սովորողների սխալվելու իրավունքը:
, Մանկավարժական հաղորդակցման առանձնահատկություններից են հաղորդակցման հետևյալ ոճերը.

Դեմոկրատական ոճ: Ուսուցիչը ներգրավում է աշակերտի նոր ոնումների մեջ՝ հաշվի առնելով նրա կարծիքները, խրախուսելով պնդումների ինքնուրույնությունը, հաշվի է առնում ոչ միայն առաջադիմությունը, այլև աշակերտների անհատական որակները: Այս ոճով առաջնորդվող ուսուցիչների աշակերտները հաճախ զգում են բավարարվածություն կատարած գործունեությունից, նրանց ինքնագնահատականը բարձր է: Այդպիսի ուսուցիչների համար բնորոշ են բարձր մասնագիտական կայունություն, բավարարվածություն սեփական մասնագիտությամբ:

Ավտորիտար ոճ: Ուսուցիչը միանձնորեն որոշում է ընդունում, կատարում է խիստ հսկում հանձնարարած պահանջների կատարման վերաբերյալ, օգտագործում է իր իրավունքները, առանց հաշվի առնելու իրավիճակն ու սովորողների կարծիքները, չի հիմնավորում իր գործողությունները սովորողների առջև: Այս ոճի հետևանքով սովորողները կորցնում են ակտիվությունը կամ իրականացնում են այն միայն ուսուցչի առաջատար դերի դեպքում, առաջանում է սովորողների մոտ ցածր ինքնագնահատական, ագրեսիվություն: Ուսուցչի ազդեցության գլխավոր մեթոդներն են հրամանը, հանձնարարությունը:

Լիբերա լոճ: Ուսուցիչը որոշումներ կայացնելիս հետ է քաշվում, փոխանցելով նախաձեռնությունը աշակերտներին, կոլեգաներին: Սովորողների գործունեության կազմակերպումն ու հսկումը կատարվում է առանց համակարգի, ցուցաբերում է անվստահություն, տատանում: Դասարանում անկայուն մթնոլորտ է լինում և թաքնված կոնֆլիկտներ [1, էջ 56-57]:

Մանկավարժական աշխատանքում շփումը շատ կարևոր է: Երբեմն հաղորդակցման բարդություններն են որոշում մանկավարժական աշխատանքի նկատմամբ մեր վերաբերմունքը և ուսուցիչների նկատմամբ աշակերտների վերաբերմունքը:

Ուսուցիչը շփվում է իր գործընկերների, աշակերտների և նրանց ծնողների, իր մասնագիտական գործունեության հետ կապված այլ անձանց հետ: Սա է մասնագիտական և մանկավարժական հաղորդակցության նպատակը: Ակնհայտ է, որ այս նպատակներն առաջին հերթին պայմանավորված են մեր հասարակության կրթական համակարգի առջև ծառացած ընդհանուր նպատակներով ու խնդիրներով, նրա հիմնական ուղենիշներով:

Ուսուցչի փոխազդեցությունն իր աշակերտների հետ չի կարող ինքնանպատակ լինել: Առաջին հերթին դա պետք է նպաստի աշակերտի կողմնորոշմանը արժեքային աշխարհում, պետք է միտված լինի նրան օգնելու սեփական արժեհամակարգը կառուցելու գործում:

Մանկավարժական հաղորդակցությունը կատարում է գրեթե բոլոր այն հիմնական գործառույթները, որոնք իրականացվում են առօրյա ոչ մանկավարժական հաղորդակցության մեջ: Սրա հետ մեկտեղ մանկավարժական հաղորդակցության գործառույթներն ունեն իրենց առանձնահատուկ առանձնահատկությունները:

Ուսուցման գործընթացում ուսուցիչը խոսում է աշակերտների հետ որպես գիտության, գրականության, արվեստի կամ պրակտիկայի որոշակի բնագավառում կրթական տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը: Ուստի ուսուցչի հետ շփումը նպաստում է աշակերտներին համապատասխան տեղեկատվության փոխակերպմանը: Խոսքային վարվելակերպի բանաձևային համակարգում պակաս կարևոր չէ տրամաբանական հաջորդականությունը. անհրաժեշտ է հետևել հաջորդականության կարգը նորմավորող կանոններին, որոնք, սակայն, անխախտ չեն:

Այսպիսով, մանկավարժական հաղորդակցությունը աշակերտների և ուսուցիչների միջև հաղորդակցության կազմակերպման, հաստատման և զարգացման բազմակողմանի գործընթաց է, որը ձևավորվում է նրանց համատեղ գործունեության նպատակներից, բնույթից և բովանդակությունից: Հաղորդակցության մեջ առանձնանում են հաղորդակցական, ինտերակտիվ և ընկալման կողմերը: Կարևոր է, որ հաղորդակցության այս բոլոր ասպեկտներն իրենց դրսևորեն միաժամանակ:

Նախքան հետազոտական աշխատանքի գրի առնելը ուսումնասիրել եմ շրջապատի երեխաների և նրանց ծնողների խոսքը, ունեցել զրույց երեխաների ու ծնողների հետ, փորձելով հասկանալ հաղորդակցման խոսքային ուղղության կարևորությունը որքանով է գիտակցված, տարբեր ձևակերպումներով փորձել եմ հասկանալ,թե ընտանիքի և երեխաների խոսքի զարգացման մեջ ում դերն է կարևոր:

Այնուհետև, կազմել եմ պնդումներ ծնողների համար, որոնք ներառում են հիմնախնդրի բացահայտմանն ուղղված հարցադրումներ:

Խնդրում ենք ուշադիր կարդալ հարցերը և նշել Ձեր նախընտրած պատասխանները

	Ճիշտ է	Սխալ է	Չգիտեմ
1. Խոսքը երեխայի դաստիարակության գործում առաջնային դեր ունի			
2.Խոսքային հաղորդակցումը համարվում է երեխայի արժեհամակարգի առաջնային միջավայր			
3.Երեխայի խոսքի ձևավորման գործում մեծ է ընտանեկան դաստիարակությունը			
4. Երեխայի խոսքի ձևավորման գործում մեծ է դպրոցի դերը			
5.Գրագետ խոսքային հաղորդակցմանը պետք է ուշադրություն դարձնել,երբ երեխան սկսում է խոսել			
6.Ուսուցչի մասնագիտական գործառույթներից հաղորդակցման հմտությունն ամենակրևորն է			



Այսպիսով, ամփոփելով սոցիոլոգիական պնդման արդյունքների վերլուծությունը, պարզ է դառնում որ ծնողների մեծամասնությունը,ովքեր հատկապես ունեն բարձրագույն կրթություն, գրեթե լիարժեք գիտակցում են,որ խոսքը երեխայի դաստիարակության մեջ առաջնային դեր ունի, և որ խոսքի ձևավորման մեջ մեծ դեր ունի ընտանիքի դաստիարակությունը: Պաստեցի նաև այն,որ գյուղում ծնված և այնտեղ մեծացաց ծնողների կարծիքով գրագետ խոսքային հաղորդակցումը երեխան պետք է սովորի դպրոցից,օգտվելով ուսուցչի մասնագիտական գործառույթներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝

- մասնագիտական գրականության մանրամասն ուսումնասիրությունից և իմ կողմից կատարված հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել
- Խոսքային հազորդակցումը տեղեկատվության փոխանցումն է մարդուց մարդ,որը իր մեջ բազմաթիվ խնդիրներ է ներառում
- Լեզվի տիրապետման իմաստը ոչ միայն և ոչ այնքան լեզվական և մշակութային գիտելիքների յուրացումն է, որքան այդ գիտելիքների հիման վրա խոսքային գործունեության ակտիվ տիրապետումը:
- 21րդ դարի աշակերտի համար մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական և ավելի ազատ հաղորդակցման զարգացմանը:
- Հենվելով մի շարք հոգեբանամանկավարժական հետազոտությունների և իմ ուսումնասիրությունների վրա՝ կարող եմ նշել, որ խոսքային հաղորդակցմա ն լիարժեք ուղղորդումը նպաստում է երեխաների և միջավայրի փոխհարաբերությունների ձևավորմանը, նրանց անձնային տարբեր որակնե րի զարգացմանը:

Ամփոփելով նշեմ, որ մանկավարժական մշակույթի ձևավորումը ենթադրում է մանկավարժական հաղորդակցման, մանկավարժական ստեղծագործության երեխաների ուսումնական, սեփական մասնագիտական գործունեության կառավարման բազմազան տեխնոլոգիաների լիարժեք տիրապետումը:

Մանկավարժին անհրաժեշտ է տիրապետել մանկավարժական վարպետությանը, մեթոդներին, երեխաների բնավորության, խառնվածքի և տարիքային անհատական և հոգեբանական առանձնահատկությունները:

Կարող եմ փաստել , որ ուսուցիչն է հենց այն կարևոր մարդկանցից մեկը ,ով մեծ դերակատարում ունի աշակերտի կյանքում, հենց ուսուցիչն է, որ կարող է աշակերտների մոտ
զարգացնել համապատասխան խոսքային իրավիճակներում ազատ ինքնարտահայ տման կարողությունները, խոսքը օգտագործելու տարբեր նպատակների համար՝ պ ատմություններ պատմելու, ցանկությունները հայտնելու, համոզելու, մխիթարելու, շնորհավորելու, արդարանալու և այլն: Ուսուցչի ճիշտ աշխատանքի

արդյունքում աշակերտները կիմանան, որ խոսքը հանդիսանում է մարդկանց գործունեության կազմակերպման և պլանավորման ամենակարևոր միջոցներից մեկը և կկարողանան խոսքն օգտագործել տարբեր իրավիճակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արմինե Դալլաքյան ,,Մանկավարժական միտք: Ուսուցում և դաստիարակություն,,
2. Ա.Ա. Լեոնտև ,,Մանկավարժական հաղորդակցում,, Երևան 1982 <<Լույս>> հրատարակչություն,
3. Գրետա Հակոբյան, Լաուրա Ասատրյան ,,Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանության ձեռնարկ,, Երևան Արտագերս 2011
4. В.А Левин ,,Воситание творчеством и искыцтва,, 2007
5. М.И.Калинин ,, О коммунистическом воспитании,, М. 1968
6. М.С. Макаренко. соч. Т IV М. 1957
7. Мартынова Е. Скулябина А.Лениздат 1990
8. Симонов П.В. ,,Мативированный мозг,, М. Наука 1987
9. В.А Сухомлинский ,,Рождение гражданина,, изд. 2.е М. 1971
10. Вигодский Л.С. ,,Педогогическая психология ,, М. Политиздат 1926
11. ,,Педагогика сотрыдичество Учительская газета 1986
12. ,, Խոսք և հաղորդակցություն ,, ժամերը մայրենիի դասընթացում (infourok.ru)
13. Լ.Ս.Վիգոտսկի, Մանկան հոգեբանություն, 1984
14. Ա.Տեր Գրիգորյան «Խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան Լույս հրատարկչություն, 1974թ.:
15. Ջ.Գյուլամիրյան «Մայրենիի ուսուցման մեթոդիկա», Երևան Զանգակ հրատարկչություն, 2013թ.:

16. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, «Նոյյան տապան» հրատարակչություն, 2005, Էջ 228